

---

## ԳՈՅԱԿԱՆԻ ՍԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ

### ԷԼԻՉԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

Ավանդական լեզվաբանական մոտեցմանը քերականական սեռը կապվում է գոյականները դասերի բաժանելու գաղափարի հետ: Չուկեսի բնորոշմամբ՝ «բոլոր գոյականները պատկանում են որևէ կոմիրես սեռի, և կան միայն սակավաթիվ բառեր, որոնք միաժամանակ մի քանի դասերի են պատկանում»<sup>1</sup>: Չնդեվրոպական լեզուներում գոյականի քերականական սեռը բնորոշվում է ինչպես իր, այնպես էլ ուղեկցող ածականի վերջավորությամբ և գոյականների համար դասակարգողական կարգ է: Այն հարակրկնական է եզակի թվի երրորդ դեմքի դերանունների համար և բառափոխսական՝ մնացած խոսքի մասերի համար: Այս քերականական կարգը շատ հնդեվրոպական լեզուների բնորոշ հատկանիշներից է և ժամանակակից լեզուներում հանդես է գալիս ինչպես եռեզր համակարգով (օր.՝ սլավոնական լեզուներում և գերմաներենում), այնպես էլ երկեզր (օնմանական և իրանական լեզուներում): Ավանդաբար սեռը պայմանավորված է սեռերի առկայությամբ՝ արական, իգական, կամ դրանց բացակայությամբ՝ չեզոք սեռ<sup>2</sup>: Ուստերեն, իսպաներեն և գերմաներեն լեզուներում սեռի քերականական կարգն ակնհայտորեն գոյություն ունի, քանի որ այն արտահայտված է, մինչդեռ անզերենում սեռի ենթակարգը գոյություն ունի այնքանով, որքանով կա գոյական անվան փոխարինման հնարավորությունը եզակի թվի երրորդ դեմքի դերանուններով (դերանվանական սեռ):

Ժամանակակից հայերենում գոյականը սեռի քերականական կարգով չի բնորոշվում, սակայն լեզվաբանները ենթադրում են, որ հայերենը՝ որպես հնդեվրոպական լեզու, նույնպես, կարող էր սեռի կարգը նախալեզվից ժառանգած լինել: Ե. Ֆեթերը, որը զբաղվում էր հայերենի հետազոտությամբ, կարծում էր, որ հայերենում քերականական սեռի երեմնի գոյության հետքեր է գտել: Որպես օրինակ նա բերում է «Կահազմի ծնունդը» վիպերգության առաջին տողը. Երկնէր երկին և երկիր, երկնէր և ծովն ծիրանի: Ֆեթերն այն կարծիքին էր, որ երկին գոյականն այստեղ արական սեռի է, իսկ երկիր-ը՝ իգական: Այս վարկածը հաստատելու համար նա վկայակոչում է այն փաստը, որ այլ հնդեվրոպական լեզուներում նույնպես երկինքը արական սեռի է, ինչպես օրինակ՝ գերմաներենում (der Himmel), իսկ երկիրը՝ իգական (die Erde): Այս գոյականների սեռերը, ըստ նրա, պատճառաբանված են և ունեն ինաստագործառական իիմք, քանի որ «երկինքն անձրև է ստեղծում, իսկ երկիրը կլանում է անձրև»: Յ. Աճառյանի կարծիքով, այս և ննանօրինակ էլի մի քանի համընկնումներ չեն կարող

<sup>1</sup> Hockett, Ch. F. A Course in Modern Linguistics, 1958, s. 231.

<sup>2</sup> Сեւ Բինոգրած Բ. Ա. Պօդ // յազկօնում. Մ., 1998, էջ 417:

բավարար իիմք հանդիսանալ խոսելու հայերենում սեօի քերականական կարգի գոյության մասին<sup>3</sup>: Յայկական ավանդագրույցներում արևը (die Sonne) ներկայանում է կնոջ կերպարով, լուսինը (der Mond)՝ երիտասարդ տղամարդու, սակայն սրանք էլ դեռևս սեօի գոյության բավարար ապացույց չեն և կարող են, պարզապես, պատկերավոր արտահայտության միջոց լինել՝ առանց որևէ կերպ քերականական սեռն ակնարկելու:

Ա. Մեյեն նույնական միտված էր ապացուցելու, որ հայերենը՝ որպես հնդեվրոպական լեզու, չի կարող սեօի քերականական կարգը պարզապես շրջանցել: Նրա կարծիքով, սեօի հետքերը պահպանվել են գրաբարում: Բառավերջում -ի ունեցող գոյականները հոլովկում են երկու սկզբունքով, որը նա բացատրում է նրանց սեռով: Արական սեօի գոյականները սեռական հոլովկում ստանում են -ուց, գործիականում՝ -ուվ վերջավորությունները, իսկ իգական սեօի գոյականները՝ համապատասխանաբար -եաց և -եաւ (որդի -որդոց – որդով, չարիք – չարեաց – չարեաւ): Սակայն, չնայած բազմաթիվ փորձերին, լեզվաբաններին այդպես էլ չի հաջողվել վերականգնել հայերենի սեօի անբողջական պատկերը, բացի թերևս -ուիհ, -է, -իա, -իթայ, -էթ, -ի իգական վերջածանցներից, որոնցից ժամանակակից հայերենում պահպանվել է միայն -ուիհ-ն:

Գոյականի սեօի վերաբերյալ ներկայիս ուսումնասիրությունները վերաբերում են հիմնականում XX դարի վերջերին բնորոշ գենդերային հետազոտություններին: Լեզվաբանները կրկին անդրադարձան այս հակասական կարգին՝ դիմելով ճանաչողության տեսության սկզբունքներին և օգտագործելով հոգելեզվաբանական, նյարդալեզվաբանական և մշակույթների գորգադրական վերլուծության մեթոդները՝ լեզվում սեօի լեզվաբանական և ոչ լեզվաբանական բովանդակության պարզաբանման նպատակով:

Ե. Կուրզանը նշում է, որ քերականական սեօի համակարգում գոյականների կարգայնացման վերաբերյալ պատկերացումները բավական սահմանափակ են, քանի որ գոյականների դասակարգումն ըստ սեռերի բնորոշ է հիմնականում հնդեվրոպական լեզվուներին<sup>4</sup>: Որոշ լեզվուներում քերականական սեռն այս կամ այն չափով արտացոլում է առարկայի կենսաբանական սեռը կամ սեօի բացակայությունը (անշունչ առարկաների դեպքում): Կան նաև գոյականների կարգայնացման այնպիսի համակարգեր, որոնք չեն համապատասխանում սեօի վերաբերյալ եղած ավանդական պատկերացումներին: Օրինակ՝ հյուսիսամերիկյան հնդկացիների լեզվուներն ունեն երկու սեռ՝ շնչավոր և անշունչ: Լայն իմաստով «սեռ» եզրույթը կարող է կիրառվել նաև ավելի շատ համակարգերի նկատմամբ (մինչև քսան՝ հյուսիսաֆրիկյան լեզվուներում) կամ էլ կապվել Ավստրալիայի բնիկների լեզվի չորս դասերի հետ: Ըստ այդ դասակարգման, որը հայտնի դարձավ Դ. Դիկսոնի և Զ. Լակոֆի շնորհիվ, տղամարդիկ կենգուրուի, չղջիկի և լուսմի հետ դասվում են մի խմբի, իսկ կանայք արևի, կրակի, ջրի և այլ վտանգավոր առարկաների հետ միասին կազմում են երկուրդ դասը: Երրորդ դասի մեջ մտնում են բոլոր ուտելի պտուղներն ու

<sup>3</sup> Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր., 1983:

<sup>4</sup> Steven Curzan, A. Gender Shifts in the History of English. Cambridge University Press, 2003:

բույսերը, գինին և թխվածքները, իսկ չորրորդ դասը կազմում են միսը, մարմնի մասերը և ծառերի մեջ մասը<sup>5</sup>:

### **Սերի բնական և քերականական համակարգերը**

Սլավոնական խմբի լեզուներին հատուկ սերի եռանդամ համակարգին հակադրվում է երկանդամ համակարգը, որը ձևավորվել է որոշ հնդեվրոպական լեզուներում՝ չեզոք սերի դուրսման հետևանքով։ Օրինակ՝ ռուսական լեզուներում լատիներենի չեզոք սերը տարրալուծվել է արականի և իգականի միջև, արևելաբալթյան լեզուներում չեզոք սերի հետքերը պահպանվել են միայն պրուսական բարբառներից մեկում, իրանականում՝ սերի մասունքներ կարելի է տեսնել սակերենում և սողդերենում, իսկ պարսկերենում և տաջիկերենում՝ սեռն արդեն վերանում է։ Սերի եռանդամ համակարգը պահպանվել է մի քանի գերմանական լեզուներում (գերմաներեն, նորվեգերեն, իսլանդերեն, իդիշ), այսինքն՝ այն լեզուներում, որոնք հիմնականում պահպանել են բառաձևերի հին համակարգը։

Ոչ շատ վաղ անցյալում սերի քերականական կարգ ուներ նաև անգլերենը, սակայն քսաներորդ դարի սկզբին արդեն այն պատմություն դարձավ։ Ի տարբերություն հնդեվրոպական այլ լեզուների սերի քերականական համակարգերի՝ ժամանակակից անգլերենի սերի համակարգը հիմնված է իմաստի վրա։

Ընդունված է առանձնացնել սերի քերականական և բնական համակարգեր։ Քերականական համակարգում սերի նշման համար կիրառվում են գոյականների վերջավորությունները։ Թեքույթները ենթադրում են գոյականների, ածականների, դերանունների և հոդերի հոլովածների առկայություն, ինչպես օրինակ՝ գերմաներենում, և համաձայնեցման համակարգ՝ պայմանավորված գոյականի սեռով։ Բնական սերի համակարգում լեզվաբանական սերը կախված է վերաբերյալի կենսաբանական սերից և համդես է գալիս համապատասխան դերանունների միջոցով։ Այս երկու համակարգերն են, թեպետ գերծ չեն հակասականություններից, առկա են եվրոպական լեզուներում։

Տարբեր ժամանակներում լեզվաբանները պարբերաբար անդրադառնում են այն հարցին, թե ինչպես է ի հայտ եկել քերականական սերի համակարգը, և թե ինչու է այն որոշ լեզուներում անհետացել կամ փոխարինվել բնական սերի համակարգով (գրաբար, անգլերեն)։

Տարածված է այն կարծիքը, որ նախադասության մեջ քերականական սերի հիմնական գործառույթը համարվում է գոյականական խմբի միավորների միջև համաձայնեցման միջոցով երկիմաստությունների վերացումը։ Այդ դեպքում հասկանալի չէ, թե ինչու որոշ լեզուներում (անգլերենում) նշույթավորման այշչափ արդյունավետ համակարգը փոխարինվեց զուտ ռեֆլեկտիվ (անդրադառնան) տիպի համակարգով։

Քերականական սերի անհետացման երևույթին տրվում են տարբեր բացատրություններ։ Այս տեսակետից բավական մանրակրկիտ վերլուծության է ենթարկվել անգլերենը։ Ըստ Է. Կլասենի՝ անգլերենում քերականական սերի հետզարգացումը տեղի է ունեցել հին անգլերենում ցուցական

<sup>5</sup> See Lakoff, G. Women, Fire and Dangerous Things. What Categories Reveal about the Mind. – Chicago & London: The Univ. of Chicago Press, 1990:

դերանունների միաձև դառնալու և վերջավորությունների անհետացման հետևանքով, որն էլ ժամանակի ընթացքում դժվարացրել է սեռերի տարբերակումը<sup>6</sup>: Կրիստոլը սերի անհետացումը կապում է շեշտի դիրքի հետ: Սերի հիմնական ցուցիչ հանդիսացող վերջավորությունների տարբերակումն անգերենում գնալով ավելի դժվար էր դառնում, քանի որ անգերենի գոյականների մեծ մասի առաջին վանկն էր շեշտ կրում. -ո՛, -ո՞ և նման վերջավորությունները գործնականում գրեթե նույն կերպ են հնչում<sup>7</sup>: Իհարկե, այս բացատրությունները բավարար և առավել ևս սպառիչ չեն, քանի որ գերմանական լեզուններում նույնպես եղել են նմանատիպ միտումներ, որոնք, սակայն, սերի անհետացման պատճառ չեն դարձել:

Սշված փոփոխությունների համար ավելի հիմնավոր պատճառ թերևս կարող էր հանդիսանալ հասարակական-պատմական գործոնը: Նորմանների նվաճման տարիներին անգերենը դարձավ անկիրթ մարդկանց լեզու, որն էլ արագացրեց փոփոխությունների անարգել տարածման ընթացքը: Գրավոր խոսքի բացակայությունը օժանդակեց բանավոր խոսակցական լեզվում կաղապարների պարզեցմանն ու միօրինակացմանը, և սա էլ իր հերթին պատճառ դարձավ, որ լեզուն վերադառնա բնական սերի համակարգին: Է. Կլասենը գրում է, որ բնական սերի համակարգն առաջ եկավ վերջավորությունների կորստից առաջացած խառնաշփորի հետեւ վանքով: Նմանատիպ մեկնաբանություն է տալիս նաև Գ. Փլացերը: Նա նշում է, որ իին անգերենը երբեւ չի ունեցել քերականական սերի հաստատուն համակարգ, ուստիև ժամանակի ընթացքում անցունը բնական սերի համակարգին անխուսափելի էր, քանի որ այն արդեն գոյություն ուներ քերականական համակարգի ներսում<sup>8</sup>:

Յին անգերենում բոլոր շնչավոր գոյականների քերականական սեռը համընկել է վերաբերյալի բնական սեռին՝ բացառությամբ *wifmann* գոյականի, որը, սակայն, նույնպես հաճախ գործածվել է իգական սեռով: Յամակարգի ներսում երկու տարբեր սկզբունքների առկայությունը զարգացման հակասական միտումների պատճառ հանդիսացավ: Փլացերը, սակայն, այն համոզմանն է, որ այս համակարգի հիմքում ընկած է ոչ այնքան սերի հասկացությունը, որքան շնչավոր և անշունչ վերաբերյալների հակարնան գաղափարը: Բնական սեռը վերագրվում էր միայն անձ ցույց տվող գոյականների դասին, թեպետ անկենդան ուժերենտները ևս միշտ չեն, որ ներկայանում էին չեզոք սեռով: Օրինակ՝ *se stan* (the stone) կապակցությունը հանդես էր բերում արական սերի հատկանիշներ, իսկ *a seo duri-*ն (the door) պատկանում էր իգական սեռին: Այս բառերի սերի քերականական իմաստները պահպանվել են ժամանակակից գերմաններենում (der Stein, die Tür):

Անշունչ գոյականների ներգրավումը գենդերային դաշտ հանգեցրեց չեզոք սերի դիրքերի թուլացմանը: Իրավիճակն ավելի անորոշ էր կենդա-

<sup>6</sup> Տե՛ս Classen, E. On the Origin of Natural Gender in Middle English. *Modern Language Review*, (14), 97-103, 1919:

<sup>7</sup> Տե՛ս Crystal, D. The Cambridge Encyclopedia of the English Language. Cambridge: Cambridge UP, 1995:

<sup>8</sup> Տե՛ս Platzer, H. "«No Sex, Please, We're Anglo-Saxon?» On Grammatical Gender in Old English." *View[z]: Vienna English Working Papers*: 10, 34-47, 2001:

նիների դեպքում, որոնք նշվում էն ինչպես չեզոք, այնպես էլ իգական և արական սեռի դերանուններով՝ պայմանավորված խոսողի օգայական վիճակով: Այսինքն՝ կենդանիներին որևէ սեռի վերագրումը կրում էր գործնական բնույթ՝ հատկապես ընտանի կենդանիների և թռչունների դեպքում: Դասից դաս նմանօրինակ անցումները կարելի է թերևս ավելի շուտ ճարտասանության, քան քերականության ոլորտին վերագրել, հատկապես եթե անտեսվի այն կանոնավորությունը, որը գործում է այդ անցումների ժամանակ:

Գոյականի քերականական սեռի ծագման հնարավոր վարկած է այն, որ մարդուն հատուկ են շրջակա առարկաներն ու երևոյթներն անձնավորելու ձգությունը և իր հետ դրանց մասնակի նույնացումը: XX դարասկզբին իշխող էր այն տեսակետը, որ քերականական սեռի համակարգի հիմքում ընկած է կենսաբանական սեռը: Որքան էլ անտրամարանական թվա մեզ անշունչ առարկային սեռի վերագրումը, այնուամենայնիվ շատ հնարավոր է, որ նախալեզվի սեռի համակարգում գոյություն են ունեցել ինչ-որ հիմնավորումներ, որոնք աշխարհի գերբնական (միստիկ) պատկերում ենթարկվում են որոշակի տրամաբանության, և որոնք մոռացվել և անհետացել են<sup>9</sup>:

Լեզվում սեռի կարգի առաջացումը Մ. Իբրահիմը չի կապում արտալեզվական իրողությունների հետ: Ըստ նրա՝ սեռի քերականական կարգի ակունքները պետք է փնտրել լեզվի ներսում, երբ զարգացման ինչ-որ փուլում բնական սեռը լեզվում հավելյալ դրսնորումներ է ձեռք բերում<sup>10</sup>: Տարածված է նաև այն կարծիքը, որ սեռի ծագումը պայմանավորված է լեզվի հասարակական տարրերակներով, մասնավորապես՝ տղամարդկանց և կանանց ահօրյա խոսակցական լեզվում վերջավորությունների տարրերություններով:

Զորբեթը սեռի համակարգը բնորոշում է որպես իմաստաբանական կաղապարների վրա հիմնված կարգ, որտեղ սեռը գոյականին վերագրվում է ելելով իմաստից՝ առանց հաշվի առնելու նրա ձևը<sup>11</sup>: Իմաստի վրա հիմնված դասակարգումները համարվում են բնական տիպի և առաջին հայացքից շատ տրամաբանական և կանխատեսելի են թվում: Սրան, սակայն, հակադրվում է դասակարգման ձևական տիպը, որի սահմանած սկզբունքներով ձևավորվում է ոչ թե իմաստաբանական, այլ քերականական սեռի համակարգը: Վերջինս քերականական սեռի եռանդամ համակարգերում հաճախ հակասություններ է առաջացնում իմաստաբանականի հետ հարաբերվելիս: Յակասության ցայտուն օրինակներ են՝ գերմաներեն das Weib-«կին», das Mädchen-«աղջիկ», das Fräulein-«օրիորդ» չեզոք սեռի գոյականները: Ինչպես տեսնում ենք, լեզուներում նշված տիպերը ոչ միայն միաժամանակ առկա են, այլև երբեմն հաղես են գալիս միահյուսված՝ խարիսլելով այն սահմանը, որ դնում են լեզվաբանները բնական և ձևական տիպերի միջև:

<sup>9</sup>Տե՛ս **Foundalis, H. E.** Evolution of Gender in Indo-European Languages. Proceedings of the 24<sup>th</sup> Annual Conference of the Cognitive Science Society. Fairfax, Virginia. [Online]. Available: 2002, www3.isrl.uiuc.edu/~jungwang4/langev/alt/foundalis02evolutionOF/Foundalis2002.pdf

<sup>10</sup>Տե՛ս **Ibrahim, M. H.** Grammatical Gender: Its Origin and Development. The Hague: 1973:

<sup>11</sup>Տե՛ս **Corbett, G. G.** Gender. Cambridge University Press, 1991:

## Գոյականի սեռը որպես հոգելեզվաբանական իրողություն

Քերականական սերի եռանդամ համակարգի առանձնահատկությունները, որ պահպանել են գերմաներենը և մի շարք սլավոնական լեզուներ, նկարագրել է Զ. Թեյլորը գերմաներենի նյութի հիման վրա: Նա գտնում է, որ սերի կարգը հոգեբանական իրողություն է, որն ունի մի շարք լեզվաբանական պատճառներ՝ թեյլորի այս դրույթը հաստատում են նի շարք հոգելեզվաբանական հետազոտություններ՝<sup>12</sup>, համաձայն որոնց՝ բարի հնչյունական պատկերի և նրա այս կամ այն սերին պատկանելու միջև գոյություն ունի որոշակի փոխկապակցվածություն: Այս վարկածը մեծ տարածում գտավ, չնայած այն հանգամանքին, որ հեղինակները նշում են բազմաթիվ բացառություններ: Նրանց մեկնաբանությամբ՝ բացառություններն անխուսափելի են թեկուզ այն պատճառով, որ բարը լեզվի օրիգացման ընթացքում կարող է հայտնվել հակադիր միտումների խաչմերուկուն և կրել դրանց ազդեցությունները: Օրինակ՝ գերմաներենում **και-** հնչյունների կապակցությամբ սկսվող գոյականները պատկանում են արական սերին՝ բացառությամբ das Knie-«ծունկ» բարի: Արական սերի են պատկանում նաև բառավերջում **-n** + **բաղաձայն** կապակցությամբ գոյականները, օրինակ՝ der Hund-«շուն», der Wind-«քամի». բացառություն են, սակայն, die Hand-«ձեռք», das Kind-«երեխա» բառերը: Որպես կանոն՝ հգական սերին պատկանում են **շփական** + **t** վերջավորությամբ գոյականները, ինչպես օրինակ՝ die Angst-«վախ», die Luft-«օդ». բացառություն են der Saft-«հյութ», der Dunst-«հոսք» գոյականները: Նշված և այլ հնչյունական սկզբունքներով սերի կանխորոշվածության ճշմարտացիությունն ապացուցվել է նաև գիտափորձերով: Փորձարկվողներին առաջարկվել է վերը նշված հնչյունական կազմով գերմաներեն հնարովի բառերին վերագրել որևէ սեռ: Արդյունքներն սպասվածից ավելի տպավորիչ էին. հարցվածների 70%-ը բառերը դասակարգել են սպասված հնչյունական սկզբունքներին համապատասխան:

Գերմաներենում բարդ գոյականների սեռը պայմանավորված է վերջին բաղադրիչի սեռով: Որոշիչ նշանակություն ունեն նաև վերջածանցները. **-heit**, **-keit**, **-ung**, **-schaft** վերջածանցներով գոյականները հգական սերի են, **-ling**, **-er** վերջածանցները նշում են արական, իսկ **-chen**, **-lein** –ը՝ չեզոք սեռը:

Այսպիսով, գերմաներենում քերականական սեռը դրսնորվում է երեք մակարդակներում. ծևաբանական (բարի ներքին ծև), շարահյուսական (քերականական համաձայնեցում), իմաստաբանական (բարիմաստի կառուցվածք)<sup>13</sup>: Ուստի սերի քերականական կարգը մի համակարգ չէ, որ պարզապես պետք է մտապահել: Լեզվակիրը մայրենի լեզվում հազվադեպ է թույլ տալիս գոյականի սեռով պայմանավորված սխալներ, անգամ փոխառությունների և նորաբանությունների դեպքում, որոնք կանոնավոր կերպով ներգրավվում են սերի համակարգ: Սերի քերականական կարգ

<sup>12</sup> Տե՛ս Taylor, J. Cognitive Linguistics. Oxford Textbook in Linguistics: Oxford University Press, 2002:

<sup>13</sup> Տե՛ս Kopcke, K. M., Zubin, D. H. Die kognitive Organisation der Genuszuweisung zu den einsilbigen Nomen der deutschen Gegenwartssprache. *Zeitschrift fuer germanistische Linguistik* 11, 166-82, 1983:

<sup>14</sup> Տե՛ս Corbett, G. G. Gender. Cambridge University Press, 1991:

ունեցող լեզուներում գոյականների 85%-ին առանց վարանելու կարելի է վերագրել այս կամ այն սեռը՝ հիմնվելով ձևաբանական և հնչունաբանական այն տեղեկությունների վրա, որ կողավորված են բառում: Այս դիտարկումը թույլ է տալիս հավաստել, որ նույնիսկ ձևական համակարգերում, որտեղ գոյականի սեռը հիմնված է լեզվաբանական հատկանիշների վրա, այնուամենայնիվ առկա է իմաստաբանական միջուկը:

### **Սեռի կարգը և ժամաշողությունը**

Գոյականի սեռի կարգը հոգելեզվաբաններին հետաքրքրում է այն տեսանկյունից, թե ինչպես է այն անդրադառնում մեր ճամաշողության վրա, իսկ ավելի կոնկրետ՝ սեռի վերագրումը գոյականին կամայական, տարերային բնո՞ւյթ է կրում, թե՝ այն բխում է վերաբերելիի հանդես բերած հատկանիշներից, և եթե այդպես է, ապա հատկապես ո՞ր հատկանիշներից: Արդյո՞ք գոյականի այս կամ այն սեռին պատկանելն ազդում է իրերի մասին մեր ունեցած պատկերացումների վրա:

Բորոդիցկու և Շմիդտի անցկացրած գիտափորձերից մեկի Ժամանակ իսպաններեն և գերմաններեն լեզվակիրներին առաջարկվել է մտապահել բառագույգեր, որոնք բաղկացած են, օրինակ, անշունչ ու վերացական գոյականներից և կանանց ու տղամարդկանց հատուկ անուններից: Գիտափորձի արդյունքները ցույց տվեցին, որ այն բառագույգերը, որոնցում գոյականի սեռը և հատուկ անվան գենդերային պատականելությունը համընկնում էին, ավելի լավ էին նտապահվել<sup>15</sup>:

Մեկ այլ գիտափորձի Ժամանակ իսպանացի, գերմանացի և անգլախոս փորձարկվողներից պահանջվել է առարկաներին վերագրել կանացի կամ տղամարդկային ձայն՝ իբրև մոլտիպլիկացիոն ֆիլմի նկարահանման նպատակով, որտեղ առարկաները ներկայանալու են որպես շնչավորներ<sup>16</sup>: Ինչպես և ակնկալվում էր, գիտափորձի տարբեր լեզվակիր մասնակիցների մոտեցումները շատ դեպքերում համընկել են: Սեռի կարգի հետազոտություններում այս տեսակետից անշափ կարևորվում է տվյալ լեզվում այսպես կոչված «աբերցեպտիվ» սեռի, այսինքն՝ «սեռն ըստ ընկալումների» ձևավորման համակարգը:

Եթե քերականական սեռի վերագրումը պայմանավորված է զուտ լեզվաբանական օրինաչափություններով, ապա նիշանգամայն տրամաբանական կլիներ, որ տարբեր լեզվակիրների պատկերացումներն այս հարցում չհամընկնեին: Իսկ եթե, այնուամենայնիվ, կարծիքներն առանձին դեպքերում համընկնում են, նշանակում է՝ տարբեր լեզվակիրների գիտակցության կառույցներում առկա են այնպիսի ճանաչողական և իմացական հիմքեր, որոնք ունեն մշակութային ընդհանուր հենք: Օրինակ՝ կենդանիները, որոնց վերագրվում են կանացի կամ տղամարդկային որոշակի կարծրատիպային հատկանիշներ, իսպաններենում և գերմաններենում, որպես կանոն, ունեն նույն քերականական սեռը. գեղեցիկ և վայելակազմ կենդանի-

<sup>15</sup> Ste'v Boroditsky L., Schmidt L. Sex, Syntax and Semantics. Proceedings of the 7<sup>th</sup> International Cognitive Linguistics Conference. Santa Barbara. [Online]. Available: <http://www ircs.upenn.edu/cogsci2000>

<sup>16</sup> Ste'v Sera, M. D., Elief, C., Burch, M. C., Forbes, J., Rodriguez, W. When language affects cognition and when it does not: An analysis of grammatical gender and classification. *Journal of Experimental Psychology: General*, 131, 377-397, 2002:

ները հիմնականում իգական սեռի են, իսկ ուժեղ և ազրեսիվ կենդանիները՝ արական սեռի: Քերականական սեռը հաճախ համընկնում է նաև առարկա ցույց տվող այն գոյականներում, որոնց ավելի հեշտ է նարդու ննանեցնել կամ մարդկային հատկանիշներ վերագրել: Յարկ է նշել, որ գենդերային ինտուիցիան ավելի զարգացած է քերականական երկանդամ հակադրություն ունեցող լեզվակիրների մոտ (իսպաներեն, ֆրանսերեն, իտալերեն, պորտուգալերեն), որոնցում գոյականը նշույթավորված է կամ արական, կամ էլ իգական սեռով: Այս տեսանկյունից անգլիախոսները, մեղմ ասած, այնքան էլ շահեկան վիճակում չեն, քանի որ հիմնվում են բացառապես բնական սեռի համակարգի վրա, որտեղ արական-իգական հակադրությունը գուգորդվում է միայն շնչավոր գոյականների հետ:

Գիտակործի հեղինակները եզրակացնում են, որ լեզվում անշունչ առարկաների մասին հասկացութային պատկերացումներն ուղղակիրեն պայմանավորված են նաև բառին անրագրված քերականական սեռով: Այս դրույթը, իհարկե, լայնածավալ քննարկումների ալիք է բարձրացնում: Լեզվաբանների մի խումբ հակված է գիտափորձի արդյունքները մեկնաբանել որպես ապացույց այն բանի, որ փորձարկվողներն ունեն լեզվական և մշակութային մերձավորություն, ուստիև՝ դրանից բխող որոշակի ընդհանրություններ: Գոյականի քերականական սեռի և ճամաչողության հարաբերակցությունը, ամենայն հավանականությամբ, իհմնված է այդ լեզուներում և մշակույթներում բնական և քերականական սեռերի վերաբերյալ պատկերացումների բարդ և բազմակողմանի կապերի վրա, «որոնք կրում են ինչպես ինացարանական, այնպես էլ լեզվաբանական բնույթ»<sup>17</sup>:

L. Բորոդիցկին, ի հաստատումն այն դրույթի, որ քերականական սեռը զգալի ազրեցություն ունի առարկաների մասին մեր ունեցած պատկերացումների վրա, մեկ այլ հետաքրքիր գիտափորձ է անցկացրել: Փորձն անցկացվել է անգլերեն, երկլեզու մասնակիցների՝ իսպաներեն և գերմաներեն լեզվակիրների հետ: Փորձարկվողներին առաջարկվել է անգլերենով բնութագրել բանալի և կամուրջ առարկաները: Բանալի բառն իսպաներենում պատկանում է իգական, իսկ գերմաներենում՝ արական սեռին: Պարզվել է, որ իսպաներեն լեզվակիրները բանալուն վերագրել են հիմնականում իգական, իսկ գերմաներեն լեզվակիրները՝ արական հատկանիշներ, ինչը համապատասխանում է փորձարկվողների մայրենի լեզվում այդ գոյականի քերականական սեռին: Գերմանացի փորձարկվողները բանալին բնորոշել են որպես «heavy, hard, jagged, metal, serrated and useful (ծամր, դժվար, քառավոր, մետաղյա, ատամնավոր, օգտակար)», իսկ իսպանացիները՝ «golden, intricate, little, lovely, shiny and tiny (ոսկյա, խճճած, փոքր, սիրելի, փայլուն, պուճուրիկ)»: Կամուրջը գերմանացիների կողմից բնութագրվել է որպես «beautiful, elegant, fragile, peaceful, pretty and slender (գեղեցիկ, նրբագեղ, փիսրուն, խաղաղ, սիրունատես, քարեկազմ)», իսկ իսպանացիները կամուրջը բնութագրել են «big, dangerous, long, strong, sturdy and towering (մեծ, վտանգավոր, երկար, ամուր, սոռնուն, բարձրացող)» ածականներով:

<sup>17</sup> **Foundalis, H. E.** (2002). Evolution of Gender in Indo-European Languages. *Proceedings of the 24<sup>th</sup> Annual Conference of the Cognitive Science Society*. Fairfax, Virginia.[Online]. Available: [www3.isrl.uiuc.edu/~jungwang4/langev/alt/Foundalis02evolutionOF/Foundalis-2002.pdf](http://www3.isrl.uiuc.edu/~jungwang4/langev/alt/Foundalis02evolutionOF/Foundalis-2002.pdf)

Բորոդիցկու գիտափորձը գրեթե նույնությամբ մենք կրկնեցինք հայ փորձարկվողների հետ: Փորձն անցկացվել է լեզվաբանական համալսարանի ուսանողների հետ: Փորձարկվողների առաջին խումբը ուսումնասիրում էր գերմաներեն, իսկ երկրորդը՝ իսպաներեն: Մասնակիցները «կամուրջ» և «բանալի» առարկաները բնորոշող հատկանիշները պետք է ներկայացնեին, սակայն ոչ թե անգլերենով, այլ գերմաներենով և իսպաներենով: Գերմաներեն ուսումնասիրող ուսանողների խումբը կամուրջը բնորոշել է գեղեցիկ, բարձր, երկար, նեղ, նոր, հին, ամուր, այրված, խարխուլ, փոքր, լայն, վտանգավոր, կապող, իսկ իսպաներեն ուսումնասիրողները՝ բարեր, երկաթե, գեղեցիկ, կապող, անցանելի, դժվարանցանելի, ուժեղ, ամուր, ընդարձակ, անվերջանալի, բարձր, վտանգավոր, քարքարոտ հատկանիշներով: Բանալին գերմաներենով ներկայացվել է՝ երկաթե, մեծ, երկար, կարծ, արծաթագույն, ազատ, բացահայտող, պողպատյա, գաղտնի, սիրո, գունավոր, բացող, ուկե, իսկ իսպաներենով՝ փոքր, արծաթագույն, ուկեգույն, մետաղյա, ուկե, նեղ, գաղտնի, հոգու, սիրո, սրտի, ծևավոր, բարուն որոշչիներով: Ինչպես տեսնում ենք, կամրջին և բանալուն հայ փորձարկվողների կողմից գերմաներենով և իսպաներենով վերագրված հատկանիշները ընդհանուր առնամբ շատ չեն տարբերվուն միմյանցից, բայց ուշագրավ է այն, որ դրանք որոշ դեպքերուն համընկնում են գերմանացի և իսպանացի փորձարկվողների պատկերացուներին: Որպեսզի պարզենք՝ այդ համընկնումները պատահական են, թե, այնուամենայնիվ, այդ լեզուներն իրենց ազդեցությունն են ունեցել առարկայի նասին փորձարկվողների պատկերացուների վրա, գիտափորձը կրկնեցինք մեկ ուրիշ խնդրում՝ փոքր-ինչ փոխելով առաջադրանքը: Այս խնդիրն առաջարկվեց «կամուրջ»-ն ու «բանալի»-ն բնորոշել հայերենով: Փորձարկվողները մայրենի լեզվով կամուրջը բութագրել են՝ մաշված, վտանգավոր, անհասանելի, մեծ, փոքր, գեղեցիկ, բարձր, բախտի, քարութանդ, կոր, ծիգ, կյանքի, խորիրդավոր, աներեր, թեք, լուռ, երազանքների, վեհ, սարսափազդու, իսկ բանալին՝ երկաթե, սառը, սրտի, հոգու, տիկորության, մեծ, փոքր, ուկե, նոր, կեղտոտ, հին, ծևավոր, ժանգոտ, արծաթե, գաղտնի, համապատասխան, վստահելի, փայլուն, օգտակար, շքեղ հատկանիշներով: Ակնհայտ է, որ այս առարկաների հայերեն բնորոշումներն ավելի հարուստ են՝ համեմված նաև ազգամշակութային բաղադրիչնով, բայց միևնույն ժամանակ մասսամբ կրկնում են նախորդ գիտափորձի արդյունքները՝ գրեթե հավասարաշափ արտացոլելով թե՛ գերմաներեն և թե՛ իսպաներեն տրված բնորոշումները: Այստեղից հետևությունն հայերեն բնորոշումներուն իգական և արական հատկանիշները սահմանազատված չեն: Այս գիտափորձի արդյունքները մեկ անգամ ևս հավաստում են Բորոդիցկու անցկացրած գիտափորձի եղորակացությունները. նախ, որ քերականական կարգերն առանձին ու ինքնարավ մեծություններ չեն, այլ ներկառուցված են մեր ճանաչողության մեջ, և երկրորդ՝ գոյականի քերականական կարգն ազդում է առարկայի մասին մեր ունեցած պատկերացուների վրա:

Գոյականի քերականական սեռը՝ որպես մշակութային իրողություն, շատ ավելի ակնառու է դաշնում թարգմանությունների (հատկապես գեղարվեստական թարգմանությունների) ժամանակ: Խնդրահարույց է հատկապես վերացական այն հասկացությունների թարգմանությունը, որոնց

սեռը տվյալ լեզվամշակութային ավազանում պայմանավորված է որոշակի կարծրատիպերով։ Օրինակ՝ Բ. Պաստեռնակն իր բանաստեղծություններից մեկում կյանք-ին իր քույրն է անվանում է։ Ուստերեն «յանձնելու» իգական սերի գոյականը գերմաներենում չեզոք սերի է, ինչն էլ այս բանաստեղծության թարգմանիչներին բարդ խնդրի առաջ է կանգնեցնում։ Գրեթե նույն «մշակութային շոկ»-ին են ենթարկվում ուսւ լեզվակիրները, երբ «մեղք»-ը (die Sünde) գերմանացի ստեղծագործողների գործերում կնոջ կերպարով է ներկայացվում։ Նման իրավիճակներում թարգմանիչը հարկադրված է համարժեք լուծում գտնել և հաճախ ստիպված է սերի փոխակերպում կամ, այսպես կոչված, «վերակարգայնացում» կատարել։

Հետաքրքրական է նաև, որ շատ հեղինակներ մայրենի լեզվով ստեղծագործելիս նույնպես, առարկան անձնավորելով, հաճախ դրան վերագրում են մի սեռ, որն ամենահին էլ չի համընկնում նրա քերականական սեռին։ Ներկա դեպքում խոսքն արդեն ոչ այնքան տվյալ մշակութային հանրության մեջ ձևավորված պատկերացումների, որքան հեղինակի սեփական գօյայությունների և փորձի վրա հիմնված գուգորդումների մասին է։ Յ. Լուսականը գրում է. «Այն դեպքերում, երբ կերպարվեստի պատկերները կամ բնությունն արտացոլող մշակութային տեքստերը, կամ էլ վերջապես իրական տեսանելի աշխարհի առարկաները, որոնք տվյալ մշակութային հանակարգում խորհրդանշային բնույթ են կրում, ներթափանցում են բանաստեղծական լեզու, ... ձևական կարգը ... անխուսափելիորեն ոչ ձևական համարժեք է ստանում և քերականականից վերածվում է ճարտասանականի»<sup>18</sup>։ Որպես օրինակ նա բերում է Ա. Ս. Պուշկինի «Կ մօրի» բանաստեղծությունը, որտեղ ծովն արական սերի է, որովհետև պոետը նրան որպես իր ընկերն է («Կայ դրուգ րոպոտ չայնաւեհոյ») ներկայացնում։

Ընդհանուր առմանք, նման դեպքերում գոյականին որևէ այլ սերի վերագրումը շատ խիստ կանոնների չի ենթարկվում, քանի որ այն հիմնականում կախված է հենց խոսողից։ Խոսքային գործունեության ընթացքում խոսողը հասկացությանն իր նպատակադրումներին համապատասխան սեռ է վերագրում։ Իենվելով որոշակի հոգեբանական և իրադրային գործուների վրա։ Այսպես՝ անգերենում երրորդ դեմքի անձնական դերանվան ընտրությունը պայմանավորված է ոչ միայն արտալեզվական իրականությամբ, այլև տվյալ առարկայի կամ երևույթի մասին խոսողի պատկերացումներով ու ընկալումներով։ Իրականության անհատական լեզվական պատկերը որոշիչ է դաշնում այն կարգերի համար, որ մենք գործածում ենք մեր խոսքում։ Այսպիսի «ինքնաշեն» կարգերը հաղորդակցության ընթացքում հաճախ թյուրըմբռնումների տեղիք են տալիս և կարիք ունեն լրացուցիչ պարզաբնումների։ Դասկացված լինելու համար խոսողը հնարավորինս ձգուում է դիմել իգականության կամ արականության վերաբերյալ տվյալ մշակութային հանրության մեջ տարածում գտած պատկերացումներին։

Գոյականի սերի տարբերակայնության վերաբերյալ ուսումնասիրությունների շարքին է պատկանում Թ. Սվարթենգրենի՝ սերի կարգի հետազոտությունը ժամանակակից ամերիկյան խոսակցական անգլերենում։ Նա

<sup>18</sup> **Лотман Ю. М.** Почему море в мужском роде? [Online]. Available: <http://www.dictionnaire/narod.ru/sea.htm>.

ուշագրավ դիտարկումներ է կատարել խոսքում օբյեկտները երրորդ դեմքի դերանուններով փոխարինելու տեխնիկայի վերաբերյալ և որոշակի օրինաչափություններ է նկատել անշունչ առարկաները հզական «*she*» դերանվամբ նշելու միտման առնչությամբ: Ըստ Սվարթենգրենի՝ կարելի է «*she*» դերանվամբ նշվող գոյականների երեք խումբ առանձնացնել.

1.այն առարկաները, որոնք ստեղծված են հիմնականում տղամարդկանց կողմից (մերենաներ, արդյունաբերական ապրանքներ, շինություններ, շարժիչներ, ֆինանսական ծերնարկություններ, ճանապարհներ),

2.գոյականացված գործողությունները, օր.՝ «*whooping her up*»,

3.բնության առարկաները, որոնք նարդկային գործունեության արդյունք չեն<sup>19</sup>:

Նշված դեպքերում «*she*»-ն ոչ թե սերի, այլ ավելի շուտ այդ առարկաներին դրական զգայական երանգավորում հաղորդող անձնավորման ցուցիչ է: Արական սերի անձնական դերանունն ավելի հաճախ հանդիպում է այն առարկաների անվանումների փոխարեն, որոնք շատ մեծ չափերի են, և որոնց նկատմամբ խոսողն ակնհայտորեն բացասական վերաբերմունք ունի: Իհարկե, այս նշանակցումները (կոնոտացիաները) համընդհանրությաին բնույթ չեն կրում և սերտորեն առնչվում են լեզվամշակութային համատեքստին: Այս տեսակետից առարկային իզական սերի վերագրումը կարող է իրականացվել նաև բացասական հատկանիշների հիման վրա, ինչպիսիք են՝ թուլությունը կամ խարդավանքը այնպես, ինչպես արական սերի վերագրումը կարող է ընկալվել դրական՝ հատկապես այն հատկանիշների ընդգծման համար, ինչպիսիք են ուժը, հզորությունը, հաստատությունը և այլն: Հավանական է, որ ժամանակակից անգլերենը վերարտադրում է սերի հնդեվողական համակարգը, որը ներկայանում էր շնչավոր (ուժեղ) և անշունչ (թույլ) հակադրությամբ, այդ պատճառով էլ «*it*» դերանվամբ շնչավոր ռեֆերենտի ներկայացնան միջոցով խոսողը զրկում է նրան ուժից ու կամքից և այդպիսով արտահայտում իր արհամարհական վերաբերմունքը:

### Եզրակացություն

Գոյականի սերի համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն լեզվաբանության, այլև լեզվական գիտակցությունն ուսումնասիրող ճանաչողական գիտությունների համար:

Հոգելեզվաբանների գիտափորձերը հաստատում են այն դույրը, որ սերն ամփոփված է բարիմաստի մեջ՝ նրա խորքային կառույցներում, և շատ դեպքերում որոշիչ դեր է կատարում առարկաների և վերացական հասկացությունների վերաբերյալ լեզվակիրների պատկերացումների ձևավորման հարցում:

Հնդեվողական լեզուներում գոյականի սերի պատմական զարգացման ուսումնասիրությունը թույլ է տալիս խոսել այս կարգի դիմամիկ բնույթի մասին: Անցումը սերի մի համակարգից մյուսին կամ լեզվի տարժամանակյա կտրվածքում սերի անհետացումը՝ այս կարգի համար միան-

<sup>19</sup> St. Svartengen, T. H. The Use of Feminine Gender for Inanimate Things in American Colloquial Speech / Moderna Sprak #48, 261-292, 1954:

գամայն օրինաչափ են: Ուստի սեռային տարբերակների առկայությունը լեզվի համաժամանակյա վիճակում նույնպես օրինաչափ է:

Անգլերենում սեռը անցուն է կատարել քերականական համակարգից բնական համակարգ, և, չնայած ժամանակակից անգլերենում այս կարգի ոչ բավարար նշույթավորվածությանը, այն բավական ցայտուն արտահայտված է անգլախոսների լեզվական գիտակցության մեջ:

Անփոփելով սեռի կարգի վերաբերյալ պատմական տեղեկություններն ու փորձերի հիմնան վրա հավաքած տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ գոյականի սեռը լեզվի, ինչպես նաև գիտակցության ամենահին, ամենահակասական կարգերից է և, փաստորեն, մշակութային երևույթ է, որում միայնուսված են ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական իրողություններ:

**ЭЛИЗА КАЗАРЯН – Грамматическая категория рода существительных как психолингвистическое и культурное явление.** – В статье анализируются различные восприятия в рамках грамматической категории рода в индоевропейских языках (немецкий, английский, испанский, армянский, русский). Категория рода рассматривается как древняя мифологическая категория, которая включает в себя как минимум три области знания – о мире, культуре и языке. Отдельному разбору подвергаются развитие и особенности данной грамматической категории в названных языках. Анализируется также синхронная вариативность категории в языке и речи, играющая важную роль в гендерной теории.

**ELIZA GHAZARYAN – *The Grammatical Category of Gender as a Psycho-linguistic and Cultural Reality.*** – The paper deals with the ways of representation of different kinds of knowledge within the category of gender in Indo-European Languages (German, English, Spanish, Armenian, Russian). The category of gender is viewed as an ancient mythological category, into which at least three types of knowledge are projected: knowledge about the world, about culture and about language. Attention is given to the development and peculiarities of this linguistic category in the languages, mentioned above, and to the synchronic variability within this category in language and speech with regard to the significance of these data for the gender theory.